



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման
ձևերը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Ոսկանյան

Ուսումնական հաստատություն՝ Ախթալայի հ2 միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....3

2.Ինքնուրույն աշխատանքի նշանակությունը դպրոցականների ուսուցման գործընթացում.....4

3.Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը.....4

4.Ինքնուրույն աշխատանքի դասակարգումը.....9

5.Ինքնուրույն աշխատանք դասագրքի հետ.....14

6.Եզրակացություն.....16

7.Օգտագործած գրականություն.....17

Ներածություն

Դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը:

Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն ու իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Դպրոցը պետք է ուրախություն պատճառի դպրոցականին: Դա պայմանավորված է ոչ միայն սովորողների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքով, այլ նաև հաջողակ կրթական գործունեության նկատմամբ մարդասիրական հոգատարությամբ: Ուսուցչի խնդիրն է, բացել երեխայի սիրտը, արթնացնել նրա ցանկությունը՝ սովորելու նոր նյութ և աշխատել դրա հետ: Դրա համար ուսուցիչը պետք է լավ իմանա երեխաների հոգեբանական առանձնահատկությունները, կարողանա հասկանալ յուրաքանչյուր սովորողի անհատականությունը և գտնել ուսուցման և ճանաչողական մոտիվացիայի ձևավորման համապատասխան մեթոդներ, ինչպես նաև կազմակերպել սովորողների ինքնուրույն աշխատանքը: Սովորողների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից- դաս, դասարանից - դասարան: Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ աշակերտները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:

Ինքնուրույն աշխատանքի նշանակությունը դպրոցականների ուսուցման գործընթացում

Անկասկած, ինքնուրույն աշխատանքն առաջին պլան է մղում աշակերտների գործունեությունը, իսկ աշակերտն ինքը՝ որպես ակտիվ ստեղծագործ անձնավորություն, հանդիսանում է նրա գործունեության կերտողը: Աշակերտների անհատականության գործունեությանը դրսևորվում է ինքնուրույն աշխատանքի նպատակներ դնելու, այն պլանավորելու, մեթոդների որոշման արդյունքների գնահատման մեջ:

Աշակերտների ինքնուրույն աշխատանքը պահանջում է ինտենսիվ մտածողություն, տարբեր ճանաչողական առաջադրանքների լուծում, նշումներ կատարելը, ուսումնական տեղեկության ըմբռնումն ու մտապահումը:

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:

Փորձը ցույց է տալիս, որ՝

1. Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

Օրինակ՝ նախապատրաստական փուլում սովորողները թերի և բերված տեսքի քառակուսային հավասարումները լուծում են իրենց ծանոթ բանաձևով: Ուսուցիչը նշում է, որ ճիշտ լուծելու դեպքում հավասարման արմատները կլինեն այնպիսի թվեր, որոնք կապ ունեն հավասարման անդամների գործակիցների հետ: Ամբողջ դասը վերածվում է ինքնուրույն աշխատանքի լուծման մի հետազոտության:

Ուսուցման ընթացքում իմացական գործունեություն ծավալող աշակերտի հոգեկանում կատարվող տեղաշարժերից առավել կարևոր են գիտելիքների կուտակումը, հարստացումը, համակարգումն ու կատարելագործումը, առավել արդյունավետ եղանակների, հնարների ու ձևերի տիրապետումը. հայտնի է, որ մարդու մտածողությունն ակտիվանում է, երբ նա կանգնում է որոշակի դժվարությունների առջև: Կատարելով պահանջվող քայլերը՝ աշակերտները հնարավորություն են ստանում, որպեսզի ինքնուրույն դիտարկումների հիման վրա իրենք բացահայտեն օրինաչափությունը: Դրա կրթական նշանակությունն անհամեմատ

ավելի մեծ է , քան եթե ուսուցիչը կմատուցեր պատրաստի գիտելիքը, իսկ աշակերտները կկատարեին ընդամենը լսողի և վերարտադրողի դեր:

Առաջադրանքից հետո աշակերտները ինքնուրույն կատարում են համապատասխան եզրակացություններ`

ա)ձևակերպում են Վիետի թեորեմը.

բ)իրենց եզրակացությունը գրառում են գրատախտակին.

գ)ձևակերպում են Վիետի թեորեմի հակադարձ թեորեմը:

2. Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության, տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

Օրինակ` թե ինչ կապ կա քառակուսային հավասարման արմատների նշանների և անդամների գործակիցների նշանների միջև:Այդ կապը ցույց տալու համար լրացնում են հետևյալ աղյուսակը.

	p	q	X ₁	X ₂
Տարբերակ 1				
Տարբերակ 2				
Տարբերակ 3				
Տարբերակ 4				

Յուրաքանչյուր տարբերակի կատարողները աղյուսակում լրացնում են տառերի համապատասխան նշանները:

Եզրակացություն. եթե ազատ անդամը դրական է ,ապա արմատները...նշանի են:

Եթե ազատ անդամը դրական է, իսկ միջին անդամի գործակիցը բացասական, ապա արմատները...նշանի են:

Եթե ազատ անդամը բացասական է, ապա արմատները ... նշանի են:

Եթե ազատ անդամը դրական է, իսկ միջին անդամի գործակիցը բացասական,ապա արմատները...նշանի են:

Եթե ազատ անդամը դրական է,միջին անդամի գործակիցը ևս դրական, ապա արմատները...նշանի են:

Եթե ազատ անդամը բացասական է, միջին անդամի գործակիցը ևս բացասական, ապա արմատներից... նշանի է, իսկ...նշանի:

Եթե ազատ անդամը՝ բացասական է, իսկ միջին անդամի գործակիցը՝ դրական, ապա արմատներից...նշանի է, իսկ...նշանի:

Աշակերտների պատասխանատվության զգացումը բարձրացնելու ամենագորեղ միջոցներից է, երբ գնահատվում է:

3. Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է աշակերտների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

4. Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք:

Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. Կազմակերպչական.

Սա սովորողների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է :

2. Բանաձևեր.

Որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում:

Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

3. Նախապատրաստական.

Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. Կողմնորոշիչ.

Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բացակայությունը. Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն ուսումնասիրում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար:

Սովորողները ծանոթանում են աշխատանքի ընթացքում բաշխած հուշաթերթիկի բովանդակությանը:

Այս փուլում ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը, որը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում են նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:

Հենց այս փուլում է ձևավորվում ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

Օրինակ՝ եռանկյան անկյունների գումարը հաշվելը: Աշակերտներին տրվում են թղթից պատրաստված տարբեր չափերի, անհավասար եռանկյուններ:

Ձևակերպվում է առաջադրանքը.

ա) ճշգրտորեն չափել (1° -ի ճշգրտությամբ) եռանկյան անկյունները.

բ) լրացնել գրատախտակին նախապես գծված աղյուսակը:

5. Հիմնական փուլ.

Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

Աշակերտները ճշգրտորեն չափելով եռանկյան անկյունները, համեմատում են ստացված արդյունքները:

Գտնում են օրինաչափությունները (եթե դժվարանում են, ուսուցիչը հուշում է, որ ուշադրություն դարձնեն անկյունների գումարին): Կատարվում է կարևոր եզրահանգում. որ եռանկյան անկյունների գումարը հաստատուն է և հավասար է 180° -ի:

6. Ամփոփիչ փուլ: Այս փուլում կատարվում է անդրադարձ:

Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝ ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում ինքնաստուգում, ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

ա) տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը:

բ) ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա:

Անկասկած, ինքնուրույն աշխատանքն առաջին պլան է մղում սովորողների գործունեությունը: Սովորողների անհատականության գործունեությունը դրսևորվում է ինքնուրույն աշխատանքի նպատակներ դնելու, այն պլանավորելու մեջ:

Այն պահանջում է ինտենսիվ մտածողություն, տարբեր առաջադրանքների լուծման ձևեր, նշումներ կատարելը, ուսումնական նյութի ըմբռնումն ու մտապահումը և այլն:

Ուսուցիչը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել աշակերտների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով:

Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և, վերջապես նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել

ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքն՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Ինքնուրույն աշխատանքի դասակարգումը

Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք մինևույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տարբեր տեսանկյուններից:

2. Ինքնուրույն աշխատանքի դասակարգման հատկանիշներ՝ ըստ ուսումնական նպատակների:
1. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
 2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող
 3. Գիտելիքները համակարգող
 4. Որոշակի կարողություններ զարգացնող
 5. Ստուգող, վերահսկող
- Այստեղից.

2. Ըստ ճանաչողական գործունեության բնույթի:

1. Ըստ տրված նմուշի օրինակ՝ պատրաստել որևէ երկրաչափական մարմին, օրինակ՝ բուրգ, գտնել մակերևույթի մակերես, ծավալ: Այսպիսի աշխատանքների կատարման ընթացքում ինքնուրույն գործողությունները աշակերտներին հնարավորություն են տալիս ավելի լավ ճանաչել երկրաչափական մարմինը և կատարել նրա նկատմամբ պահանջվող աշխատանքները: Այսպիսի աշխատանքների դերը բավականին մեծ է:

2. Կառուցողական, որոնք ստեղծագործական մոտեցում են պահանջում: Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատել, կամ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն: Օրինակ՝ պատրաստել որևէ երկրաչափական մարմին: Սովորողներին

ներկայացվում ` նշանակալի ազատություն,ինքնուրույնություն ինչպես բովանդակության որոշման, այնպես էլ աշխատանքի հնարների ընտրության մեջ:

Կառուցողական ինքնուրույն աշխատանքները սովորեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները,փաստերը, ձևավորում են ճանաչողական գործունեության հնարները և մեթոդները, նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ են ստեղծում դպրոցականների մտավոր ակտիվության զարգացման համար:Այս տիպի ինքնուրույն աշխատանքները հիմք են ձևավորում աշակերտի ստեղծագործական գործունեության հետագա զարգացման համար:

2.Ստեղծագործական –հետազոտական, որոնք երեխաների ինքնուրույն գործունեության զագաթնակետն են հանդիսանում: Այդ աշխատանքները ամրապնդում են գիտելիքների ինքնուրույն որոնման հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներից են: Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:

3.Ըստ կազմակերպման ձևի:

1.Ընդհանուր ճակատային ` երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը խմբային` ուսումնական գործընթացում արդյունավետ խմբային աշխատանք կազմակերպելու համար անհրաժեշտ են երեք էական պայմաններ`

ա/խմբային ընդհանուր նպատակ

բ/համապատասխան առաջադրանք, որը բաժանված է այնպես, որպեսզի հնարավորինս իրական հաղորդակցության պահանջ լինի խմբի ներսում

գ/աշխատանքի հստակ բաժանում և թիմի յուրաքանչյուր անդամի ներգրավվածության ապահովում` համապատասխան նրա գիտելիքների ևունակությունների:

Խմբեր ձևավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդի մոտեցմամբ: Այդպես կձևավորվեն ինչպես առաջադիմությամբ, այնպես էլ աղջիկ-տղա իմաստով տարասեռ խմբեր: Խմբերի ձևավորումից հետո հայտարարվում են խմբային աշխատանքի կանոնները: Օրինակ

• Առաջադրանքըստանալուց հետո,առաջարկվում է բարձրացնել առավել թույլ աշակերտների լուծման տարբերակը, եթե տրված պատասխանը լինի թերի կամ սխալ,առաջարկվում է խմբի առավել ուժեղ մասնակիցների կողմից հնչեցնել ուղղորդող հարցեր, որոնց միջոցով տվյալ

աշակերտները կկարողանան ինքնուրույն հանգել ճիշտ պատասխանի: Սակայն, այն դեպքում, եթե թույլ աշակերտները չեն կարողանում այդ հարցերի միջոցով գտնել խնդրի լուծումը, ապա ուժեղ աշակերտները առաջարկում են իրենց լուծումները, բացատրում խնդրի լուծման իրենց լավ տարբերակը: Այս տեսակ խմբային աշխատանքի շնորհիվ, խմբի մասնակիցները առավել լավ են յուրացնում խնդրի լուծումը և կարողանում կիրառել նմանատիպ այլ խնդիրների լուծման ժամանակ:

•Առաջադրանքի իրենց հանձնարարված հատվածն ավարտելուց հետո սովորողները պետք է մնան խմբի հետ այնքան ժամանակ, մինչև բոլորն ավարտեն:

•Խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է, որ բոլորը հասկանան և կարողանան կատարել առաջադրանքը:

•Եթե կան հարցեր, անհասկանալի հատվածներ, ապա աշակերտը նախևառաջ դիմում է իր թիմակիցների օգնությամբ, հետո դրա կարիքը կա, նաև՝ ուսուցչին: Կանոններն ընդունելուց հետո ուսուցիչը ձևակերպում է առաջադրանքը: Հիմնական խմբերի անդամները, միմյանց աջակցելով, ընթերցում են ամբողջ նյութը, ապա քննարկում անհասկանալի հասկացությունները, հատվածները:

Խմբային աշխատանքի կատարման ավարտին խմբի անդամները գնահատում են յուրաքանչյուրի կատարած աշխատանքը, ներկայացնում ուսուցչին, քննարկում վերջինիս հետ և նրա օգնությամբ ձևավորում է ինքնուրույն աշխատանքի գնահատականը:

3.Անհատական՝ երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

4.Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության:

1.Աշխատանքդասագրքով, հանրագիտարաններ և այլն:

Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից է: Առանց այդ կարողության յուրացման հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրացումը, քանի որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրերը, ինչպիսիք են՝ իմաստավորումը և ամրապնդումն իրականացվում է դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում: Գրքի շուրջ աշխատելու անկարողության պատճառով ուսումնական աշխատանքն աշակերտի համար դառնում է տանջալի աշխատանք: Գրքի շուրջ

աշխատելու կարողությունների զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:

2.Դիտումներ և գործնական աշխատանքներ:

Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները: Սովորողները հաշվում են, չափում և ստեղծում:

Նրանք դիտարկում են առարկաները և երևույթները անմիջականորեն բնության մեջ, անցկացնում են և փորձեր՝ կատարելով գործնական աշխատանքներ: Դիտարկումների, փորձերի, գործնական և լաբորատոր աշխատանքների հետ կապված ինքնուրույն աշխատանքները, ունեն շատ մեծ նշանակություն, քանի որ նպաստում են աշակերտների և հմտությունների զարգացմանը:

4.Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառման

5.Գրաֆիկական աշխատանքեր

6.Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ:

Սովորողները պատրաստում են ինքնաշեն գլաններ, կոներ, բուրգեր, պրիզմաներ:

5. Ըստ կատարման տեղի

1. Դասարանում:

2. Արտադասարանակն կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ:

3.Տանը:

Իսկ ինչ ծավալով և ինչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող

է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

2. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքների բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:

3. Առաջադրանքները պեք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

4. Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը:

Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված:

Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

5. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ, օրինակ՝ բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ: Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Մակայն պետք է նշել, որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանքը, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է դնում: Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

6. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

7. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

8. Ցանկալի է, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

9. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման <<մերձակա գոտում>> պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

10. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

11. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:

Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ:

Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով:

Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

Ինքնուրույն աշխատանք դասագրքի հետ

Այս հարցի էությունը կայանում է նրանում, որ նոր գիտելիքների յուրացումն իրականացվում է յուրաքանչյուր աշակերտի կողմից ինքնուրույն՝ դասագրքի նյութի մտածված ուսումնասիրության և դրանցից բխող փաստերի, օրինակների և տեսական եզրակացությունների իրազեկման միջոցով: Այս աշխատանքի հիմնական բնութագրիչները աշակերտի <<նյութի ինքնուրույն տիրապետումն է և դասագրքի հետ աշխատելու կարողության ձևավորումը>>:

Դասագրքով ինքնուրույն աշխատելու հմտության ձևավորումը բավականին բարդ գործունեություն է :

Դա հնարավոր է միայն համապատասխան պայմանների առկայության դեպքում: Իսկ ուժըն է դասագրքով ինքնուրույն աշխատելու հմտության ձևավորման գործընթացը:

1. Ուսումնասիրության համար թեմայի ընտրությունը էական է դասագրքով ինքնուրույն աշխատելու հմտության ձևավորման համար: Ինչպես գիտենք, աշակերտները չեն կարողանա յուրացնել բոլոր թեմաներն առանց ուսուցչի նախնական աշխատանքի և մանրամասն բացատրությունների: Ուսուցիչը կարող է ինքնուրույն աշխատանքի համար ընտրել միայն այն թեմաները, որոնք սովորողները կարող են ինքնուրույն սովորել (առանց ուսուցչի օգնության):
2. Դասագրքի հետ ինքնուրույն աշխատանքին պետք է նախորդի ուսուցչի մանրամասն զրույցը:
Այս զրույցի ընթացքում ուսուցիչը նախ և առաջ պետք է ճշգրիտ բացահայտի նյութի թեման, ընդհանուր պատկերացում կազմի բովանդակության մասին, աշակերտների ուշադրությունը հրավիրի այն հարցերի վրա, որոնք նրանք պետք է սովորեն, ինչպես նաև խորհուրդներ տա աշխատանքի վերաբերյալ:
3. Ուսուցիչը պետք է լուրջ ուշադրություն դարձնի ինքնուրույն աշխատանքի գործընթացում նոր գիտելիքներն ինքնուրույն ընկալելու և յուրացնելու սովորողների կարողությունների զարգացմանը:
4. Հաճախ սովորողների ինքնուրույն աշխատանքին կարող են նախորդել փորձերի և տեսողական նյութերի ցուցադրում՝ ուսումնասիրվող նյութերն ավելի խորը հասկանալու համար խնդրահարույց իրավիճակ ստեղծելու համար:
5. Դասագրքով ինքնուրույն աշխատելու հմտության զարգացման գործընթացում անհրաժեշտություն է առաջանում դիմել ավելի վաղ ուսումնասիրված թեմաների կրկնությանը: Հիշողության նման թարմացումը ինքնուրույն աշխատանքի հմտության ձևավորման արդյունավետության պայմաններից մեկն է:

Մեր կատարած հետազոտության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրակացությանը՝

Ուսուցումը ուսուցչի և սովորողների միջև փոխգործակցության գործընթացի կազմակերպման ձև է, որն ուղղված է որոշակի կրթական նպատակների իրականացմամբ: Ուսուցման գործընթացում զգալի տեղ է զբաղեցնում ինքնուրույն աշխատանքը, որպես գործունեություն, որն իրականացվում է առանց ուսուցչի անմիջական մասնակցության, բայց նրա հանձնարարությամբ: Ինքնուրույն աշխատանքի միջոցով հնարավոր է հասնել այն բանին, որ սովորողները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն:

Գրականության ցանկ

1. Էսիպով Զ. Պ. <<Սովորողների ինքնուրույն աշխատանքը դասին>>Մ 1961թ:
2. <<Մաթեմատիկան դպրոցում>>գիտամեթոդական ամսագիր թիվ 2, 2013թ:
3. Կ.Թորոսյան, Կ.Զիբուխյան, Մ.Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, <<Զանգակ>> հրատարակչություն, 2014թ: